«Նոմիդիսկ» ՍՊԸ գրավատան (լիցենզիա ԳԳ-Ե 059) վարկավորման ընդհանուր պայմանների փոփոխությանը համաձայնություն տալու վերաբերյալ

2019-04-05

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Որոշում թիվ 1/201 Ա

05.04.2019

«Նոմիդիսկ» ՍՊԸ գրավատան (լիցենզիա ԳԳ-Ե 059) վարկավորման ընդհանուր պայմանների փոփոխությանը համաձայնություն տալու վերաբերյալ

ՈՒսումնասիրելով «Նոմիդիսկ» ՍՊԸ գրավատան (լիցենզիա ԳԳ-Ե 059) (այսուհետ՝ նաև գրավատուն) կողմից 2019 թվականի ապրիլի 1-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված գրավատան կողմից իրականացվող վարկավորման ընդհանուր պայմանների փոփոխությունը և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 18-րդ հոդվածի 4-րդ մասի «է[1]» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասը, «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համաձայնություն տալ «Նոմիդիսկ» ՍՊԸ գրավատան (լիցենզիա ԳԳ-Ե 059) կողմից 2019 թվականի ապրիլի 1-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված վարկավորման ընդհանուր պայմանների փոփոխությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ